

**ՎԱՅԱՆԱԶԵՎ ԳԵՂԶԻ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ
ԱՔԼԱՑԻԱՆ ՈՐՊԵՍ ԲՈՒԺՄԱՆ
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄԵԹՈԴ**


ՏԵՐԵՎԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ



Վահանաձև գեղձի հանգույցների արվացիան որպես բուժման նորագույն մեթոդ



Վահանաձև գեղձի հանգույցները տարածված խնդիր են, հանդիպում են մեծահասակների 33%- 68%-ի դեպքում: Դրանք սովորաբար առանց ախտանիշների են զագանում և հայտնաբերվում են ուլտրաձայնային հետազոտության ժամանակ:



Բուժել, թե՞ ոչ

Հանգույցի բուժման անհրաժեշտությունը որոշում է բժիշկը՝ հաշվի առնելով մի քանի գործոն:



Հանգույցների մեծ մասը բարորակ է լինում և վտանգ չի ներկայացնում: Սակայն դրանք կարող են անհարմարություն առաջացնել բուժառուի մոտ, ներառյալ՝ կլման ակտի դժվարացում կամ ցավոտություն, պարանոցի այտուց և մեծացում, ինչպես նաև կարող են հանգեցնել հորմոնների մակարդակի բարձրացման:

Հանգույցներից ազատվելու ոչ-վիրահատական տաբերակ

Այժմ բարորակ հանգույցների բուժման նպատակով կիրառվում է գերժամանակակից մեթոդ, որը կոչվում է ռադիոհաճախական արվացիա (ՌՀԱ): ՌՀԱ-ն թույլ է տալիս անցանկալի հանգույցներից ձերբազատվել՝ առանց վիրահատության: Ռադիոհաճախական արվացիայի միջոցով հանգույցի չափերը կրճատվում են, հարակից առողջ հյուսվածքը մնում է անվնաս և գեղձի ֆունկցիան բարելավվում է, արդյունքում երկարաժամկետ դեղորայքի ընդունման պահանջը ևս նվազում է:

Ի՞նչ ակնկալել միջամտության ընթացքից

ՌՀԱ միջամտության ընթացքում բուժառուն պառկած է լինում մեջքին՝ պարանոցը թեթև պարզած: Բժիշկը ներարկում է տեղային անզգայացնող դեղանյութ: Սա թույլ չի տա, որպեսզի բուժառուն միջամտության ընթացքում ցավ զգա, հևարավոր է միայն՝ անհարմարության կամ սեղմող զգացողություն: Ուլտրաձայնային հսկողության ներքո բժիշկի ՌՀԱ ասեղային էլեկտրոդը ներմուծում է անմիջապես հանգույցի մեջ: Այս էլեկտրոդով հանգույցին հաղորդվում է ջերմություն, որի ազդեցությամբ հանգույցի բջիջները ոչնչանում են:



01

Թիրախավորում

Ուլտրաձայնային ախտորոշման (սոնոգրաֆիա) միջոցով բժիշկը նախ տեղորոշում է հանգույցը, այնուհետև բարակ էլեկտրոդը ներմուծում է մաշկի միջով անմիջապես հանգույցի մեջ:

02

Բուժում

Էլեկտրոդի միջով ռադիոհաճախականային ալիքներ են փոխանցվում և հանգույցում ջերմություն են առաջացնում, որի քանակը վերահսկում է բժիշկը:

03

Արդյունք

Հանգույցը ջերմության ազդեցության ներքո դեգեներացիայի է ենթարկվում (ոչնչանում է):

Ի՞նչ աավելություններ ունի ՌԶԱ միջամտությունը

Աբլացիայի մեթոդն ունի մի շարք առավելություններ, մասնավորապես՝


- ապահովում է կարծր և կիստոգ հանգույցների ծավալի կրճատում միջինում 60% -ի չափով միջամտությունից 3 ամիս անց և մինչև 90%՝ մեկ տարի անց
- արտահիվանդանոցային՝ ամբուլատոր կարգով իրականացվող միջամտություն է, բուն միջամտության տևողությունը՝ 30-60 րոպե
- իրականացվում է տեղային անզգայացման ներքո
- հասանելի լավագույն միջոցն է, որի դեպքում պահպանվում է վահանաձև գեղձի առողջ հյուսվածքը
- պահպանվում է վահանաձև գեղձի ֆունկցիան
- միջամտության հետևանքով չեն առաջանում սպիներ
- չի պահանջում ապաքինման շրջան, բուժառուն վերադառնում է իր բնականոն գործունեությանը
- բարդությունների առաջացման վտանգը շատ ցածր է:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ


Նախքան ՌՅԱ-ն



ՌՅԱ-ից 6 ամիս անց



Նախքան ՌՅԱ-ն



ՌՅԱ-ից 1 տարի անց



**Հայաստանում ՌՅԱ միջամտությունն
իրականացվում է Ռւիգմոր Զլինիքի
ինտերվենցիոն ռադիոլոգիայի
ծառայությունում**



**Խորհրդատվության գրանցվելու համար՝
+374 44 804470, +374 94 949685
Հասցե՝ Պուշկին 56**

**www.wigmoreclinic.am
www.irg.am**